Հաշվետվություն

1. *Անունը, Ազգանունը*

Արայիկ Հարությունյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ 2018 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը

4. *Հրավիրող կողմը*

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա Անհալթ երկրամասի լուսավորության նախարար

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

Գործուղման նպատակն էր Հալլե քաղաքի Մարտին-Լյութերի անվան համալսարանի «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի հիմնադրման քսանամյակի միջոցառմանը մասնակցելը, Հայաստանի Հանրապետության գործընկեր դաշնային երկիր Սաքսոնիա Անհալթ երկրամասի կրթական և գիտական հմագործակցության ոլորտներին տեղում ծանոթանալը:

6. *Քննարկված թեմաները*

Հանդիպում եմ ունեցել ԳԴՀ գիտության և գիտահետազոտության դաշնային նախարարության պետական քարտուղար Գեորգ Շյութերի հետ: Քննարկվել են հայ-գերմանական գիտական համագործակցության ընդլայնման հնարավորությունները, ինչպես նաև Գերմանիայում Թումո կենտրոնի մասնաճյուղ բացելու հարցը: Նշել եմ նաև, որ ներկայումս նախատեսվում է սկսել ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների լայնածավալ ծրագրի մշակումը, որի վերաբերյալ քննարկումներ են եղել նաև Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների, գիտության և նորարարությունների հարցերով հանձնակատար Կառլոս Մոյդաշի հետ: Այս համատեքստում անդրադարձ է եղել գիտության ոլորտում Հայաստան-Գերմանիա

համագործակցությանը: Ներկայացվել է երկկողմ գիտական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերը: Նշվել է, որ կան համագործակցության լավ ավանդույթներ բնագիտության, մասնավորապես ֆիզիկայի ոլորտում, որը պետք է ընդլայնել՝ ընդգրկելով նաև տեխնիկական գիտությունները: Գ. Շյութերը ևս կարևորելով երկկողմ գիտական համագործակցության ընդլայնման հարցը՝ ընդգծեց, որ այդպիսի փոխգործակցության հիմքը գիտնականների անձնական շփումներն ու կապերն են: Նա ավելացրեց, որ ինքն աշխատանքի բերումով հանդիպել է շատ հայազգի գիտնականների հետ և տպավորված է նրանց գործունեությամբ:

Հանդիպում եմ ունեցել ԳԴՀ ԱԳՆ քաղաքական տնօրենի տեղակալ, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերով հատուկ հանձնակատար Միխայել Զիբերտի հետ: Մ. Զիբերտը նշեց, որ գերմանական կողմը պատրաստ է խորացնել հայ- գերմանական համագործակցությունը և իր պատրաստակամությունն արտահայտեց Հայաստանում ժողովրդավարական գործընթացների ներդրման ու խորացման աջակցության հարցում:

Հանդիպում եմ ունեցել նաև ԳԴՀ մասնագիտական կրթության դաշնային ինստիտուտի ծրագրային քաղաքականության, ռազմավարության և միջազգային կապերի վարչության տնօրեն Բիրգիտ Թոմանի հետ: Գ. Թոմանը ներկայացրեց միջին մասնագիտական կրթության ոլորտում ԳԴՀ-ի փորձը, քննարկվեց երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Իմ կողմից առաջարկել է միջին մասնագիտական կրթության ոլորտում խորացնել համագործակցությունը, մասնավորապես կազմել համատեղ գործողությունների ծրագիր: Գերմանիայի Դաշնային հանրապետություն այցի ընթացքում հանդիպել եմ նաև Սաքսոնիա-Անհալթ երկրամասի տնտեսության և թվայնացման հարցերով նախարար Առմին Վիլլինգմաննի, պետքարտուղար Յ. Ուդեի և Մագդեբուրգի Otto-von-Guericke անվան համալսարանի ռեկտոր Ենս Շտրաքելյանի հետ: Հալլե քաղաքի Մարտին-Լյութերի անվան համալսարանում մասնակցել եմ «Մեսրոպ» հայագիտական

կենտրոնի 20-ամյակին նվիրված միջոցառմանը և Ոսկե հուշամեդալով պարգևատրել ճանաչված հայագետ, համալսարանի պրոֆեսոր Արմենուհի Դրոստ- Աբգարյանին:

Այցելեցինք նաև Պոտսդամում գտնվող Յոհաննես Լեփսիուսի տուն թանգարան: Ընդգծելով Յ. Լեփսիուսի ունեցած դերը հայ ժողովրդի պատմության մեջ՝ կարևորեցինք տուն-թանգարանի կողմից իրականացվող մշակութային և գիտահետազոտական աշխատանքները: Հանդիպման ընթացքում քննարկվել են տուն-թանգարանի և Հայաստանի համապատասխան կրթական և գիտական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը առնչվող հարցեր, ինչպես նաև կազմակերպել Արևելյան Եվրոպայի հայ համայքների վերաբերյալ գիտաժողովներ:

7. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները*

ԳԴՀ գիտության և գիտահետազոտության դաշնային նախարարության պետական քարտուղար Գեորգ Շյութերի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ծրագրեր մշակել ոչ միայն Թումոյի, այլ նաև ռոբոտոտեխնիկայի Արմատ լաբորատորիաների ծրագրերով: ԳԴՀ գիտության և գիտահետազոտության դաշնային նախարարության պետական քարտուղար Գեորգ Շյութերի հետ պայմանավորվել ենք ջանքեր ներդնել հայ-գերմանական գիտական կապերի ամրապնդման և հետագա զարգացման ուղղությամբ:

ԳԴՀ ԱԳՆ քաղաքական տնօրենի տեղակալ, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերով հատուկ հանձնակատար Միխայել Զիբերտը ողջունեց ՀՀ կառավարության ջանքերն ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, նշելով որ Հայաստանում համընդհանուր պայքար է մղվում կոռուպցիայի դեմ և մասնավորապես կրթության ոլորտում արդյունքներն արդեն նկատելի են: Անդրադարձ եղավ

նաև բուհերի կառավարման մարմինների քաղաքական ազդեցություններից հեռու պահելու հարցերին: Ենս Շտրաքելյանի հետ քննարկվել են բարձրագույն կրթության կազմակերպման, ինչպես նաև բժշկական և տեխնիկական մասնագիտություններով ուսանողների փոխանակման ծրագրերին վերաբերվող հարցեր: Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել փոխհամաձայնություն միջբուհական կապերի ամրապնդման և բուհերի միջև փոխգործակցության պայմանագրեր մշակելու վերաբերյալ: Մասնավորապես, Երևանի պետական բժշկական համալսարանի հետ նախատեսվում է ստորագրել համաձայնագիր մասնագետների և ուսանողների փոխանակման վերաբերյալ: Նմանատիպ ծրագիր է նախատեսվում իրականացնել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ տեխնիկական մասնագիտությունների գծով: Սաքսոնիա-Անհալթ երկրամասի դպրոցների որակի և ուսուցիչների վերապատրաստման պետական ինստիտուտ այցի ժամանակ քննարկվել են մանկավարժների վերապատրաստման, ուսումնական ծրագրերի և մոդուլների կազմման և գնահատման վերաբերյալ հարցեր: Նշվել է, որ դպրոցական կրթության նոր համակարգի ներդրման գերմանական փորձը շատ ուսանելի է մեր երկրի համար, քանի որ գերմանացիները ևս ժամանակին առերեսվել են նույն խնդիրներին: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել, որ գերմանական կողմը մինչև տարեվերջ կայցելի Հայաստան՝ համատեղ կրթական ծրագրեր քննարկելու նպատակով:

8. *Գործուղվողը*

   ՀՀ կրթության և գիտության պաշտոնակատար Արայիկ Հարությունյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

   23.10.2018

24/10/2018թ.